

(Սմբատ²⁾։ Ուրեմն Ս. Մեսրոպը առաջին անգամ մուտ գործելով ի Գողթն, ըստ այնմ ժամանակի սովորութեան պիտի գնար տեսնելու տեղւոյն իշխանին. այդ պատիւը մեծամեծ մարդկանց³ բազմատրոււմ է « գնալ յոտս մեծիկ կամ տունն ». ուստի « իջաւ նէր առ ոտս տանն Գողթան » նշանակում է Մեսրոպը գնաց Գողթան իշխանին ոտըը յարգանքի և պատուի համար, կամ որ նոյնն է « առ ոտս Տանն Գողթան »։

Կարելի չէ՞ ենթադրել թէ որպէս Մեսրոպ ի կորեան՝ Գրիգոր Լուսաւորիչ եւս փութայ « իջանել առ ոտս Տանն Այրարատեան գաւառին », այսինքն Վաղարշապատ, ուր էր Թազաւորն և որ էր սեփական կայան Արշակունի Թագաւորաց։

Հ. Գ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

Հ Ի Ն Դ Ե Մ Ք Ե Ր

Մ Ի Ն Ա Ս

Գահիրէի հայկական Լսարանին

Բ.

Խոնամերու ընտանիք մը. — Զաքարիա Վաղարշապատցոյոյմ յիշատակարամ մը,

Շահի Խասենք՝ որ Զուլայի Հայոց ներկայացուցիչ տունն էր տէրութեան դիմաց, հին և հարուստ ընտանիք մ'էին, որուն փայլն ու առատածնունդինը ազգին բուրդը գաղութներուն վրայ կը տարածուէր։ Հնազոյն դէմքը՝ որ ծանօթ է մեզի այս ընտանիքէն՝ Սաֆար ոսմ և է իր որդին Խոնա Խաչիկ, հին Զուլայի բնակիչներ՝ որոնք արդէն Վենետիկոյ հետ յարաբերութիւններ ունին։ 1603, յունուար 10, վախճանելով ի Վենետիկ Յովհաննէս ոսմ Զուլայեցի, որդի Պապայ, իր կտակին մէջ, գրուած նախընթաց զեկտեմբեր 16, որուն գործադիր յայտարարած էր իր ճամբու ընկեր ու հայրենակիցը Սիմոն, կը

յանձնարարէ իր ապրանքները ծախել, երթալ ի Սիրիա, անկից ալ Զուլա, և անոնց գինը յանձնել Սէֆէրի որդի Խաչկայ։ Խաչիկ ահագին հարստութեան տէր կը դառնայ ու կ'առնէ Խոնա տիտղոսը, Խոնա Խաչիկի որդիքներուն, որուն Խոնա տիտղոսը այլ եւս ժառանգական պատուանունը կը դառնայ իր ընտանեաց մէջ, կը հանդիպինք արդէն Սպահանի Զուլային մէջ, Խոնա Սաֆարին և Խոնա Նազարին։ Խոնա Սաֆարին չորս որդիքներն ալ, Մելիք Աղա, Ֆրանգիւլ պարոն, Սուլթանուն պարոն, Զաւալ պարոն, հարստութեան և դիրքի տէր ըլլալով հանգիստ՝ տոհմին ներկայացուցիչը Խոնա Նազարին ընտանիքը կը մնայ, որուն անդրանիկ որդին՝ Սարֆրազ գերագանց եղաւ ոչ միայն ըսն իր հօրեղբոր որդիքներն՝ այլ և ըսն իր կրօնք եղբայրներն պարոն Էլիազը ու պարոն Հայկազն, որոնք ամէնքն ալ իրենց ազնուական մօր՝ Յուլիտայի խնամոց տակ մեծցած էին։ Սարֆրազ կը ժառանգէ Խոնա տիտղոսը, զոր յետոյ պիտի թողու իր որդւոյն՝ որ փաղաքշարար Վաթան կը կոչուէր, և յետոյ եղաւ Խոնա Վաթանը՝ որուն վրայ այնքան զովեստով կը խօսին ժամանակակիցները։ Խոնա Խասենց տունը տեսակ մը արքունիք դարձած է, ուր բարձր ու ազնիւ գաղափարներու հետամուտները կը գտնեն պաշտպանութիւն, քաջակերութիւն, բարեկեցութեան ու փառքի ճամբան։

Յուցնելու համար աստիճանը այն յարգանքին, սիրոյն, և հիացման՝ որով պաշարուած էր այս ընտանիքը, բաւական կը համարիմ օրինակել հոս այն յիշատակաբանը՝ զոր գետեղած է Զաքարիա Վաղարշապատցի, Վանահայր Յովհաննա վանիկ և զարուն ամենէն զիտուն ու պատկառազեղեցի անձնաւորութիւնը, 1658 տարւոյն լոյս տեսած Աստուածաշունչի մը մէջ, զոր գրել տուած էր Խոնա Վաթան։ « Բայց հռչակաւորն յայնժամ և յայժմուս ի մէջ Զուլայեցեացն, Շահի Խասենց Խոնա Խաչիկի որդիքն էին, երեւելիք, փառաւորք, մեծաշուք և մեծահանդէպ

արքայամաջլիս մուսահիպին Թագաւորին Պարսից, համգուպանքն, համփիալայքն, մեծի Շահապազին և խորհրդակից յամենայն իրագործութիւնս, խոնա Սաֆարն աւսմի և խոնա Նազարն բազմաբախտը. ընդ սոսիմ և որդիք խոնայ Սաֆարին՝ պարոն և նազելի Մէլիք աղայն, աղօթխաւէր պարոն Ֆոանգիգիւն, պարոն Ուլլթանուն, պարոն Զալալն, և աստուածատունկ հարազատածին որդիքն խոնա Նազարին, խոնա հեմամիտն և բազմահանճարն, լայնասիրտն և արդարակշիռն, ծան հաստարմատ և գերամբարձ, զարգարեալ աստուածայնով և մարդկայնով առաքինութեամբ, որոյ ընդ հովանեաւ երկնաբերձ բարձրութեան նորա բանակատեղեալ մակադէին բազմութիւնք գազանամտաց և ջուրիք խաշանց և երամբ թռչնոց յոսոս աստուածապաշտութեան մեծահաւատն խոնայից խոնա Սաֆարազին՝ որ ամբօրութեամբ վարուց և արդարութեամբ հողոյ կենցաղաւարեալ զառօրեայս, և ի ծայրս ծերութեան ժամանեալ՝ փոխեցեալ եղև ի գունդս սրբոց ընտրելոց և իշխանացն բարեպաշտից, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի Նաեւ պարոն Էլիազն և պարոն Հայկազն:

Այլ և ի տիս տղայութեան և մանկութեան սնեալ և վարժեալ եղէ ի ծոց և ի զոգ սոցունց ազնուատուհմ իշխանագուն իշխանացս, իբրեւ զմի յորդոց իւրեանց. և սիրեցեալ յաչս սոցունց իբրեւ զհամալամ և համամիտ որդի, ոչ ըստ մարմնոյ այլ ըստ հոգւոյ, զի զառաւելութիւն և զյաճախութիւն երախտեաց սոցա՝ որ առ փանաքի հէզս, ո՞ իսկ կարէ ճառել կամ զրել. միայն երախտահատոյցն ամենայն քրիստոնէից, օծեալն Աստուած Յիսուս Քրիստոս հանգիցէ ի հոգիս սոցա և զարմից և զաւակաց սոցա, և վարձս բազումս քրիստոստիկ և բիւրիցս բիւր հազարապատիկ ըստ իւրոյ աստուածութեան անշափութեան տացէ սոցունց. կենդանեացն՝ կեանք երկարակեցութեամբ և խաղաղութեամբ, և ննջեցելոցն անպատում ուրախութիւն և անզրաւ ցնծութիւն. նաեւ որդւոց սոցունց արեւշատութիւն զի կայցեն

և մնացեն ընդ արեւու յառաջ քան զլուսին ազգէ յազգ մինչև ցլաւտեան:

Այլ արդ հարազատատունկ որդի խոնայ Սաֆարազին, գեղեցկալարմար շառաւիղն, աստուածասուն բողբոջն սաղարթափթիթ և ուղէն կանանչագեղ և անխափատեղեւ, ուսոն շքեղաբերձ և ծաղկատեսակ, պտուղն քաղցրահամ և անծորելի, մեծատանց մեծատուն և որդի մեծատան քրիստոսաւառճազն տանս Արամեան, պարոն խոնայ վաթանն ըստ զգուանաց, ցանկացող եղեալ այսմ աստուածախերտ բուրաստանիս, մեծաւ սիրով և անթերի հաւատով ետ զրել և յաւարտն հասուցանել զանազան երանգօք և երփն գունաւորութեամբ ոսկենկար վայելչութեամբ ըստ խորանին վկայութեան առ ի յաւիտեական յիշատակութիւն յազգս նախնեացն և հարցն իւրոց ընտրելոց և ծնողաց իւրոց գովելեաց, պարոն խոնայ Սաֆարազին և մօրն իւրոյ համեստամեծար և պարզելոտազարդ պատկառապանօյն և ամենազգաստ աստուածասէր Յուդիտային, հանգուցելոց ի Քրիստոս Յիսուս՝ յոյսն ամենայն երախտաւորաց ։

Հ. Ն. ԱՆՏԻՊԵՐԿԵՆ

Շարայարեկի

Յ Ո Յ Ո Ւ

Սրբոյ մէջ ալ յոյսեր չեն բընակեր,
Անոնք Թողած են մօրեր, —
Ինչպէս Թուփն վըրայ վարդի կոկիտներ,
Կաբըղաւոր
Ընկան վարս
Նորաբողբոջ յոյս, մարդկութեան հաշտ ընկեր,
Ո՛վ Ապրիլի երգչներ,
Առանց ձեզ ո՛վ կըրնայ կոչուի երջանիկ, —
Գարուն մըն է
Զուրկ ծաղկէ:
Ա՛հ, Թէ զըթոտ էք, կոկոսին մի՞ զըպչեք,
Ունի նա մէջը ծաղիկ.
Ո՛հ, Թէ ունիք սիրտ, յոյսը մի՞ մոռցնէք.
Առանց յոյսի՞
Կը մեռնի.
Գուցէ վաղուան իրագործունէն է, — Թողէք:
Թրգմ. Հ. Ղ. ԲԺԿԵՆՆ